

ինչ չափով դեր կատարած է հոլովներու արդիականացումին (աշխարհաբարացումին) մէջ, քանի որ ակներեւ է՝ թէ վերեւ արձանագրուած հոլովներէն ո՛չ մէկը այսօր չ'իյնար գրիչին տակ գրողի մը՝ որ գիտակից կերպով հետեւող է աշխարհաբարի կրած յեղաշրջութեան:

Յեղաշրջութեան պատկերը աւել ցցուն դարձնելու համար՝ հիմա խառնխուռն արձանագրենք գրաբարի հետքերով խօսքի «ձեւ»եր, որոնք 1892ին աշխարհաբարի ախոյեաններու գրիչին տակ ընթացիկ եղած են, բայց որոնք այսօրուան մանրախոյզ աշխարհաբարին մէջ հանդուրժելի չեն: Ահա՛. — կը հարկադրիմ, առ այս, դիզեալ, սլիտի առնու, կը ցածնուր, մահարեկիք, ցցուեցնել, կը ընու, կը ցածնու, առնու, հիմայ, ցորչափ (անպէտ ապաթարցով), մտածումէ ի մտածում (ապաթարցաւոր անպէտ ի-ով), ի վայր հակիլ (հետեւողական չըլլալով? համար գրողը հոս զանց բրած է ի-ին ապաթարցը), նա, զի, ի՛ մեզ, պարուրեալ, շըւարեալ, մ'ալ, մ'ընելով, եւ նման անհամար հակաաշխարհաբարեան «ձեւ»եր: Իրենց ժամանակին համար քերականական այս բնօրէն ձեւերը, որոնք գոյութեան իրաւունք չունին արդի արեւմտահայ աշխարհաբարին մէջ, քաղուած են աշխարհաբարի ախոյեան ճանչցուած 3-4 հեղինակներու միայն մէկական գրուածքներէն: Եթէ փորձ կատարուի խուզարկումը տարածելու նուազ աշխարհաբարեան դէմքերու գրուածքներուն վրայ, կասկած չկայ թէ գրաբար քերականութեան հին ձորձով տարազաւոր բրածոյ հետքերուն թուումին համար սինականեր չեն բաւեր: Ասոնց մէջ կը վիտան վերի նմուշները գերազանցող աւելի հին-օրէնք ձեւեր՝ ոճի, հոլովումի, խոնարհումի եւ ասացուածքներու: Այդ տարրերու քերականութիւնով գրուած հատուած մը՝ այսօր չի կրնար ներկայացուիլ իբր արդի աշխարհաբարի ոճի նմուշ, ինչ որ կը հաստատէ՝ թէ վեր-

ջին վաթսուներեակի ընթացքին արեւմտահայ աշխարհաբարը ոստումնաւոր յեղաշրջութիւն կրած է, դիմելով դէպի աւելի՛ պարզը, աւելի՛ միակերպը, աւելի՛ «օրինապաշտ»ը:

Հիմա հոս անհրաժեշտ է որ մէջ բերուի ամբողջական հատուած մը վաթսուներեակի առաջուան հայերէնէն, բաղդատական զուգակիւսի մը համար այսօրուան աշխարհաբարին հետ: 1895ի լեզուական ուղղութեան նմուշ մըն է հետեւեալը, որուն այսօրուան լեզուէն նշանակալից շեղումները կրնան յստակ դադարաւոր տալ վաթսուներեակի անջրպետին մէջ կատարուած լեզուական յեղաշրջութեան մասին. —

«Հայք յայնժամ չունենալով դիր եւ թարգմանութիւն Սուրբ գրոց, յեկեղեցի՝ արեւմտեան Հայոց՝ որ ընդ անմիջական իշխանութեամբ Յունաց էր՝ յոյն լեզուաւ կարդային Սուրբ գիրքն, իսկ յարեւելեան Հայս՝ որ ընդ Պարսից էր՝ ասորերէն ընթեռնուին եւ թարգման կգերն ի հայ բարբառ վերածէր օտարաբեր ընթերցումն»:

Ասոնց հատուածը արդի աշխարհաբարի վերածելու ալ, բանիմաց ընթերցողը կրնայ նշմարել լեզուին մէջ յառաջ եկած այն շրջափոխութիւնը, որուն համաձայն այսօրուան հայերէնը բացարձակապէս չի կրնար գրուիլ այն ֆերականութիւնով, որով 1895ին կրցեր է գրուիլ:

Վերեւ ջատագովումը ըրինք լեզուներու մէջ տիրել կոչուած կարեւորագոյն սկզբունքին՝ «օրինապաշտ»ութեան, անոր համար որ՝ եթէ լեզուի մը ճշգրտութեան խարխիւրը կը կազմէ իր քերականութիւնը, այդ լեզուն ա՛յնքան աւելի «օրէնք»ի վրայ հիմնուած կ'ըլլայ — հետեւաբար ճշգրիտ — որքան անոր մէջէն վտարուած կ'ըլլայ «քմայք»ը, «ականջ»ի կամ ուրիշ զգայաբանքներու հաճութեան պատրուակով:

«Ականջ», «ներդաշնակութիւն», «դաշնաւորութիւն» տեսակէտները ոմանց կողմէ «վարդապետութեան» պիտակով պաշտպանուած են երկար առեւ, կաղացներով աշխարհաբարին դէպի կատարելագործութիւն յառաջխաղացութիւնը: Այդ վարդապետութեան ամէնէն անդիմող ախոյեանը եղած է մեծանուն ուսուցչապետ Ռեթէոս Պերպերեան, որ յառաջ դացած է մինչեւ մերժելու աստիճան «երկու լեզու»ներու գոյութեան դադարաւոր, ջատագովելով «ընտրողական» «խառն լեզու»ի հետեւողութիւնը: Բայց ի՛նչ չափով որ դաստիարակ հեղինակաւոր միտքին լեզուական տեսարանութիւնը անպաշտպանելի եղած է, նոյն չափով աշխարհաբարի մակընթացութեան դրոհը «խառն լեզու»ի ամբարտաւանքը խորտակելով՝ զրտումի անյեղլի պահանջը փութացուցած է, յեղաշրջութեան անկասելի օրէնքին հրամայականով:

Յատկապէս յիշեցինք վերջին վաթսուներեակի ընթացքին՝ հայ գրական աշխարհին մէջ «խառն լեզու»ի ամբազան թումբ հանդիսացող Մարգիկ եւ Իրֆ-ի հեղինակը, որպէսզի յստակօրէն փաստուած ըլլայ՝ թէ մինչեւ անգամ Երկարածեայ քարոզութիւնով եւ գրաւոր տարփողումով պաշտպանուած սխալ տեսակէտի մը բերող դատապարտուած է չտոկալու ժամանակին հասունացուցած լեզուական փուլին, սարսելով մշակոյթի անիւներուն հոլովոյթովը կերտուող գրադիտական ամենհի շարժումէն:

ԵՆՈՎԻ ԱՐՄԵՆ



ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ

ՀԱՅ ԵՐԱԺԵՏՈՒԹԻՒՆԻՑ

ԵՐԱԺԵՏԱԳԷՏ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԵՐ

ՅՈՎՀԱՆ ՕԶՆԵՑԻ

Յովհան Օձնեցու կեանքի պատմութեան էջերը մեզ տանում են 7-րդ դարի վերջին եւ 8-րդի առաջին շրջանը: Իր ժամանակի ամենանշանաւոր եւ բացառիկ հոգեւորականներից մէկը, որ յայտնի է դառնում որպէս տաղանդաւոր հեւտոր, հմուտ աստուածաբան, լաւագոյն տրամաբանող ու վերլուծող: Այդ արժանիքների շնորհիւ էլ նա «Իմաստասէր» կոչումն է ստանում:

Նրա ծննդավայրն է Օձուն գիւղը, ուր մի հարուստ ընտանիքում սնոււմ է եւ մեծանում: Ուսանում է եւ կրթւում Տեղերի «Ս. Աստուածածին» վանքի վանահայր եւ 7-րդ դարի նշանաւոր վարդապետ Թէոփրոս Բոթնաւորի մօտ, ուր իր սիրելի դասընկերն էր Սահակ Զորափորեցին: Այնուհետեւ վարդապետական կոչման է նւիրւում: Ժամանակի արեւցի Եղիա կաթողիկոսը բարձր գնահատելով նրա մտաւոր լուրջ պատրաստութիւնը եւ բարեմասնութիւնները, իր հետ տանում է Աղւանից երկիրը, ապա Արագածոտն գաւառի եպիսկոպոս ձեռնադրում, իսկ Եղիա կաթողիկոսի մահից յետոյ նստում է հայրապետական աթոռի վրայ (718-728) եւ ձեռնհասօրէն ու իմաստութեամբ վարում է եկեղեցական գործերը:

Ձեռագիր յիշատակարաններն Օձնեցուն նկարագրում են պարթեւահասակ, թիկնեղ ու գեղեցիկազէմ, իսկ բնաւորութեամբ առաքինի, համեստ եւ խաղաղասէր: Նա արտաքուստ հազնուում է չքեղ, մօրուքի վրայ ոսկեփողի է ցանում, իսկ ներքուստ մերկ մարմնի վրայ քուրձ կրում:

Նշենք եւ այն, որ Յովհանն Օձնեցու եկեղեցական գործունէութեան տարիները զուգադիպում են արաբական դաժան լծի եւ ծանր հարկատուութեան շրջանին:

Դա այն անմխիթար պատմաշրջանն է, երբ Հայաստանում առաջ են դալիս նաեւ բազմաթիւ աղանդաւորներ — Եզրի հետեւողները, Պաղիկեանները, Պատկերամարտիկները, Երեւութականները եւ ուրիշներ, որոնց հիմնական կենտրոնը հանդիսանում է «Ջրկա» կոչւած վայրը: Ներանց կանչում են «արեւորդիք» եւ «Եզրի տիք», որոնք հայ եկեղեցու ներսում երկպառակութիւն եւ ազդի մէջ փոխադարձ ատելութիւն սերմանելով, թունաւորում են հայ ժողովրդի եւ հոգեւոր դասի խաղաղ կեանքը: Եւ ահա Յովհանն Օձնեցու համար սկսում է պատասխանատու եւ դժուարին գործունէութեան մի շրջան: Բայց նա իր իմացական շրջահայեցողութեամբ, իր դիրքով ու հեղինակութեամբ մաքրում է հայ եկեղեցին օտարոտի եւ հիւանդադին Երեւութիւններից:

Նա դեռ վարդապետ ու եպիսկոպոս խօսքով եւ գրչով պայքարում է կրօնական տարբեր ուղղութիւնների դէմ: Այդ շրջանում էլ նա գրում է իր երկու նշանակալից ճառերը, մէկը Յուլիանոս Արեւիկայի նացուն հետեւող աղանդաւորների դէմ՝ «Ճառ ընդդէմ Երեւութականաց», միւսը՝ «Ճառ ընդդէմ Պաղիկեանց», որոնցով նա լուրջ տրամաբանութեամբ հերքում է աղանդաւորների անմիտ եւ անհիմն կարծիքները, միաժամանակ պատմական տեղեկութիւններ է տալիս հայ հաւատացեալ համայնքներում տեղ գտած աղանդների մասին:

Նշանակալից է եւ այն, որ կաթողիկոս ընտրելուց յետոյ Օձնեցին իրեն յատուկ հետեւողականութեամբ ու վճռականութեամբ էլ աւելի ուժեղ պայքար է ծաւալում աղանդաւորների դէմ, իսկ նրանց անկարգութիւններին վերջ տալու համար 719 թւին գումարում է Դեիւնի 7-րդ ժո-

ղովը, ուր մի ընդարձակ եւ գեղեցիկ տաճարանութեամբ նկարագրում է հայ եկեղեցու տխուր վիճակը եւ շեշտում է բարեկարգելու կարիքը: Այդ ժողովումն էլ նա սահմանում է եւ հաստատում 32 յօդւած կանոններ: Բայց նա միայն նոր կանոնադրութեամբ չի բաւականանում: Առաջին անգամ լինելով խմբագրում է հայ եկեղեցու կանոնագիրքը:

Ուշագրաւ է մի այլ երեւոյթ: Դեիւնի ժողովից մի տարի յետոյ Օմար Բ. ամիրապետը (717-720) լսելով Օձնեցու բարեմասնութիւնների մասին, նրան հրաւիրում է Դամասկոս: Բարեսիրտ եւ բարեպաշտ ամիրապետը, երբ տեսնում է կաթողիկոսին շքեղ հագնւած եւ մօրուքի վրայ ոսկեփոշի ցանած, զարմացած հարցրնում է, թէ ինչո՞ւ քրիստոնէական օրէնքի համաձայն հասարակ ու համեստ չէ հագնւած: Այդ ժամանակ Օձնեցին բանում է իր կուրծքը եւ ցոյց տալիս մարմնի վրայ կրած քուրճը: Ամիրապետը տեսնելով այդ՝ շատ դո՛ւ է մնում եւ պատուով ու ընծաներով ճանապարհում է:

Օձնեցուն հայրապետական տարիների մի այլ գեղեցիկ եւ ուշագրաւ երեւոյթը հայ եւ ասորի եկեղեցիների սերտ կապի դադարի իրագործումն է: Նա ասորի եւ հայ հոգեւոր դասի մէջ գոյութիւն ունեցող կրօնական թիւր կարծիքները փարատելու եւ երկու եկեղեցիների մէջ խաղաղութիւն հաստատելու համար 726 թւին, Մանազկերտում, ժողով է գումարում եւ հայ եկեղեցու հմայքը սրահում իր արժանաւոր բարձրութեան վրայ: Նրա պատմական այդ դերն արժանի է արձանագրութեան:

Երկու տարի անց, 728 թւին, Օձնեցին, 11 տարւայ կաթողիկոսութիւնից յետոյ, ընդմիշտ փախում է իր աչքերը:

Յովհանն Օձնեցու կեանքի ու կրօնական գրականութեան պատկերը գծելիս արձանագրենք նաեւ նրա երաժշտական փայլուն ձիրքը: Նա դեռ վանական կեանքում ցու-

ցարեքում է երաժշտական բացառիկ ընդունակութիւն եւ իրեն նւիրում է մենաստանի նոր սերնդի երաժշտական դաստիարակութեան գործին: Յետոյ, տարիների ընթացքում յօրինում է մի շարք եղանակներ: Դրանք մէկը միւսից գեղեցիկ շարականներ են, որոնց մէջ ուրոյն տեղ են գրւում «Անակիդըն բանդ Աստուած», «Կանոն Դաւթի մարգարէին եւ Յակոբայ առաքելոյն», «Կանոն Ս. Ստեփանոսի նախալկային», «Կանոն որդւոցն Որոտման», «Կանոն Պետրոսի եւ Պօղոսի զլիսաւոր առաքելոցն» եւ ուրիշներ, որոնք արւեստագէտ եւ ժողովրդասէր հայրապետի անունը եւ յիշատակը վառ են պահում ժողովրդի սրտում:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Ռաշտ

Մ Ո Վ Ա Յ Ի Ն

Մեռաւ այս օրն ալ ծովուն վրայ լայնատարր...

Ու ջուրերուն կապուտագեղ երեսին

Զեփիւնն անոյշ իրիկուն

Իջաւ գրգռել քնքուշ այտերն երազին,

Միգամածին մէջ թաղելով հիգարար,

Մեր ապրումներն աննրման:

Վաղը առտու, այգին շաղովն հեղանաղ

Երբոր փայլի ծովն ոսկեգօծ արեւով,

Պիտի գտնենք վերստին

Անկրութեան ափերուն լոյսն հոգեթով,

Եւ կենսունակ ալեծրփանքը սիրում

Հոգեսարսուռ անդունդին:

Ծովն ու երկինք, համատարած հորիզոն,

Օծուած է այդ խորհրդապահ լըռութեամբ՝

Որ կը լեցուի Աստուծով:

Ո՞վ քաղցրութիւն փայլկեաններու սիրատարի,

Որ հողւոյն մէջ կը ծորեն լոյս, ջերմութիւն,

Հիւսուած անտես մատներով:

1954

ՈՒՂԵՒՈՐԻ ՔՆԱՐ

ԵՐԳ ՈՒ ՄԱՂԻԿ

Երգ ու ծաղիկ տըւէք ինծի
Թող պարարին աչքս ու հոգիս,
Եւ դիւթանքներ կոյս անտառի՝
Թող սիրելով խաբէ միշտ զիս:

Երգ ու ծաղիկ տըւէք ինծի,
Եւ մանուկներ մատաղերամ,
Որոնց հայեացքն անվերջ ժրպտի,
Փայփայելով հոգիս տարտամ:

Երգ ու ժրպտ տըւէք ինծի,
Եւ գեփիւնի թոյլ ալեակներ,
Հողիս առնեն տանին հեռի,
Դէպի կապոյտ հորիզոններ:

1954